ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ - ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ

ԵՌԱՄՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՅՍՏԵՂ Է ՄՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Եռամսյակային Հաշվետվություն (QR) Ընդհանուր Օժանդակության (GR) Համար

Սա նշանակում է, որ.

- Սկսած 2013թ. հոկտեմբեր 1-ից, Ընդհանուր Օժանդակության մասնակիցները կսկսեն ստանալ վերանայված Եռամսյակային Հաշվետվությունը, որը վերանվանվել է *"**Ընդհանուր Օժանդակության Եռամսյակային Հաշվետվություն (QR 7-LA)**"*:
- *GR-ի մասնակիցները պետք է շարունակեն հայտնել իրենց եկամուտը և ընտանիքում կատարված փոփոխությունները QR 7-LA հաշվետվության մեջ, յուրաքանչյուր երեք (3) ամիսը մեկ:*
- *Անհատները, որոնք ներկայումս GR-ի համար հաստատված են, կարող են ունենալ իրենց QR փուլի փոփոխություն:*

Եթե դուք ստանում եք GR և CalFresh նպաստներ, դուք կստանաք Ընդհանուր Օժանդակության Եռամսյակային Հաշվետվություն (QR 7-LA) և Կիսամյակային Հաշվետվություն (SAR 7): Դուք պետք է երկու հաշվետվություններն էլ լրացնեք այն ամսում, որը նշանակված է:

CalFresh-ի ընտանիքները, որոնք ազատված են QR-ից, կշարունակեն ազատված լինել կիսամյակային հաշվետվությունից:

Դուք պետք է շարունակեք հայտնել հետևյալ միջեռամսյակային պարտադիր փոփոխությունները (փոփոխություններ, որոնք տեղի են ունենում նախքան ձեր QR 7-LA հաշվետվության ներկայացման ժամկետը) ձեր գործը վարող աշխատողին ԵՎ ձեր եռամսյակային հաշվետվության մեջ, փոփոխությունը կատարվելուց հետո հինգ (5) օրվա ընթացքում:

- Նոր վաստակած եկամուտ $203 կամ ավելի: (Ցանկացած եկամտի գումար, որը դուք ստանում եք, պետք է հաղորդեք ձեր QR 7-LA-ի վրա):
- Նոր անաշխատ եկամուտ $25 կամ ավելի: (Ցանկացած եկամտի գումար, որը դուք ստանում եք, պետք է հաղորդեք ձեր QR 7-LA-ի վրա):
- Բարձրացված վաստակած կամ անաշխատ եկամուտ $25 կամ ավելի: (Ցանկացած եկամտի գումար, որը դուք ստանում եք, պետք է հաղորդեք ձեր QR 7-LA-ի վրա):
- Ինչ որ մեկը տեղափոխվում կամ դուրս է գալիս ձեր տանից:
- Հասցեի փոփոխություն:
- Ձեր ընտանիքի որևէ անդամը դատապարտվել է թմրանյութերի հետ կապված հանցանքի մեջ 1997թ. դեկտեմբերի 31-ից հետո և CalWORKs ստացող ընտանիքի աջակցություն չստացող անդամ է:
- Ձեր ընտանիքի որևէ անդամը հանցանքի պատճառով փախուստի է դիմել, խուսափելու համար դատական հետապնդումից կամ բանտարկությունից/դատապարտումից:
- Ձեր ընտանիքի որևէ անդամ խախտում է վաղաժամկետ ազատումը/փորձաշրջանը:
- Միացյալ Նահանգների Քաղաքացիության և Ներգաղթի Ծառայությունները (USCIS) կայացնեն ձեր T կամ U Visa-ի դիմումնագրի որոշումը:

Կիսամյակային Հաշվետվությանը վերաբերվող հավելյալ տեղեկության համար, խնդրում ենք զանգահարել Համախորդների Սպասարկման Կենտրոնները, հետևյալ հեռախոսահամարներով՝
(626)569-1399, (310)258-7400, (818)701-8200 կամ 1-866-613-3777 անվճար համարով:.